Ներածական

«ԱնիմաՌենդեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը շնորհակալություն է հայտնում Ձեզ Ընկերության ծառայությունների նկատմամբ ցուցաբերած հետաքրքրության համար։ Օգտագործողի անձնական տվյալների պահպանությունը շատ կարևոր է մեզ համար, այդ պատճառով մենք հատուկ ուշադրություն ենք դարձնում տվյալների պահպանման վրա, որոնք հավաքվում և մշակվում են ըստ մուտքի հասանելիության ստացման և մեր ծառայություններից օգտվելու աստիճանի։

Մուտք գործելով ԱնիմաՌենդերի Վեբ-կայք և օգտվելով մեր կողմից տրամադրվող ծառայություններից, Օգտագործողը դրանով արտահայտում է իր փաստացի համաձայնությունը սույն փաստաթղթի դրույթների հետ։

ԱնիմաՌենդերը ապահովում է Օգտագործողի անձնական տվյալների պահպանությունը։ Սույն փաստաթուղթը մշակվել է գրանցման ժամանակ Օգտագործողից պահանջվող փաստաթղթերի ցանկի ստեղծման, ինչպես նաև Ընկերության և նրա աշխատակիցների կողմից անձնական տվյալների մշակման եղանակների նպատակով։ Նաև, սույն Գաղտնիության քաղաքականության մեջ նշված են այն նպատակները, որոնց իրականացման համար Օգտագործողի անհատական տվյալները կարող են արհրաժեշտ լինել։

Գաղտնիության քաղաքականությունը կիրառվում է այն անձնական տվյալների նկատմամբ, որոնք հավաքվում են Օգտագործողի կողմից Վեբ-կայք դիմելու և ԱնիմաՌենդեր ծառայություններից օգտվելու ժամանակ։

Տեղեկատվության հավաքման, մշակման, պահպանման և պաշտպանության ժամանակ ԱնիմաՌենդերը ղեկավարվում է սույն Գաղտնիության քաղաքականության դրույթներով, ԱնիմաՌենդերի այլ պաշտոնական փաստաթղթերով և Ռուսաստանի Դաշնության գործող օրենսդրությամբ։

Օգտոգործողների տվյալները ստացումն ու օգտագործումը։ Օգտագործման նպատակները

ԱնիմաՌենդերը հավաքում է Օգտոգործողների անձնական տվյալները ծառայությունների մատուցման կառավարման, այդ ծառայությունների հասանելիության ապահովման, Օգտոգործողների հետ կոնտակտ հաստատելու և մատուցվող ծառայությունների մասին տեղեկատվություն տրամադրելու նպատակով։ Օգտոգործողների մասին տեղեկատվությունը կարող է օգտագործվել սպասարկման և ծառայությունների մատուցման որակի բարելավման, ինչպես նաև մարքեթինգային նպատակներով։

Սույն Գաղտնիության քաղաքականության մեջ Օգտագործողի տեղեկատվության տակ հասկացվում է. Օգտագործողի անձնական տվյալները, որ նա ինքնուրույն տրամադրում է ԱնիմաՌենդերին՝ գրանցման, հաշվման հաշվի ստեղծման, ինչպես նաև ծառայությունների մատուցման գործառույթի ժամանակ (Օգտագործողի էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոսի համարը և այլն), նաև, այն տվյալները, որ ավտոմատ կերպով փոխանցվում են կայքից և/կամ ծառայություններից օգտվելու ժամանակ (սարքավորման հասանելիության համար պահանջվող IP-հասցեն, MAC-հասցեն, գրանցման ամսաթիվը, վերջին մուտքի ամսաթիվը և այլն)։

ԱնիմաՌենդեր ծառայություններից օգտվելու ժամանակ կարող է հարցում արվել և ստացվել հետևյալ տեղեկատվությունը.

Տվյալներ Օգտագործողի մասին։ Հաշվառման հաշվի ձևավորման և/կամ գրանցման ժամանակ պահանջվում են տեղեկություններ Օգտագործողի մասին, օրինակ, էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոսի համարը, օգտագործվող վճարային համակարգի վավերապայմանները, Օգտագործողի գործունեության տեսակը։ Օգտագործողի առանձին համաձայնությամբ կարող են հարցում արվել և ստացվել Օգտագործողի կոնտակտային տվյալները (հեռախոսների համարներ և այլն)։

Տեղեկություններ Օգտագործողի սարքավորման և ծրագրային ապահովման մասին
ԱնիմաՌենդերը տեղեկություններ է հավաքում Օգտագործողի սարքավորման և ծրագրային ապահովման մասին (օգտագործվող ծրագրային ապահովման անվանումն ու վերսիան, սարքավորման IP-հասցեն, MAC-հասցեն և այլն)։ Վերոհիշյալ տվյալները կարող են հարաբերակցվել Օգտագործողի հաշվառման հաշվի հետ։

Cookie ֆայլեր: ԱնիմաՌենդերը Cookie ֆայլերն օգտագործում է Վեբ–կայքի նավիգացիայի առավելագույն հարմարավետության ապահովման, նավիգացիայի երթուղիների վերլուծության և նավիգացիայի մասին տվյալների հավաքման համար: Cookie ֆայլերը կարող են օգտագործվել նաև Օգտագործողի գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար:

Տեղեկություններ ԱնիմաՌենդեր սերվիսների օգտագործման ամսաթվի և ժամանակի մասին: ԱնիմաՌենդերի կողմից առաջարկվող ծրագրային ապահովման օգտագործման ընթացքում հավաքվում են հետևյալ տվյալները. կայքում գրանցվելու ամսաթիվը, վերջին անգամ կայք մուտք գործելու ամսաթիվը, ծրագրային ապահովման օգտագործման ամսաթիվը և այլն:

Օգտագործողների տվյալների տրամադրումը երրորդ անձանց
ԱնիմաՌենդերը երրորդ անձանց չի տրամադրում Օգտագործողների տվյալները, բացառությամբ հետևյալ դեպքերի.

1. Գործող օրենսդրության պահանջով: Այս դեպքում, ԱնիմաՌենդերը տրամադրում է Օգտագործողների տվյալները, եթե այդպիսի տեղեկատվության տրամադրումը, օգտագործումն ու բացահայտումը անհրաժեշտ է. գործող օրենսդրության կատարման և նորմերի պահպանման, դատական որոշումների կամ պետական մարմինների օրինական պահանջների իրականացման նպատակով,
2. Խարդախության հայտնաբերման, կանխման կամ այլ տիպի խոչընդոտման նպատակով,
3. ԱնիմաՌենդերի կամ Օգտագործողների իրավունքների, սեփականության կամ անվտանգության ապահովման նպատակով՝ գործող օրենսդրության թույլատրելի շրջանակներում:

Գաղտնի տեղեկատվության պահպանման համար օգտագործվող անվտանգության միջոցներ

ԱնիմաՌենդերը օգտագործում է բոլոր հնարավոր միջոցները Օգտագործողների անձնական տվյալների անվտանգության և պաշտպանության համար, սկսած չարտոնված մուտքի, տվյալների փոփոխության, բացահայտման կամ վերացման, ինչպես նաև ոչ պատշաճ օգտագործման փորձերից: Մասնավորապես, մշտապես կատարելագործվում են տվյալների հավաքման, պահպանման և մշակման եղանակները, ընդհուպ մինչև անվտանգության ֆիզիկական միջոցների կիրառումը ԱնիմաՌենդերի համակարգերի չարտոնված մուտքի, գույքի հափշտակման, ֆիշինգի և խարդախության այլ ձևերի հակազդեցության համար: ԱնիմաՌենդերը կարգավորում է նաև աշխատակիցների համար Օգտագործողների տեղեկատվության հասանելիության հարցերը՝ գաղտնիության ոլորտում նախատեսելով պայմանագրային խիստ պարտականություններ, որոնց խախտման դեպքում նախատեսված են պատասխանատվության խիստ միջոցներ և պատժամիջոցներ:

Այս կապակցությամբ, ԱնիմաՌենդերը հույսը դնում է Օգտագործողների իրենց հաշվառման հաշվի լոգինի և գաղտնաբառի խելամիտ և շրջահայաց օգտագործման վրա:

Գաղտնիության քաղաքականության փոփոխություն

ԱնիմաՌենդերը ցանկացած ժամանակ իրավունք ունի թարմացնել և փոփոխություններ կատարել սույն Գաղտնիության քաղաքականության դրույթներում: Գաղտնիության քաղաքականության նոր խմբագրությունը օրենքի ուժ է ստանում կայքում զետեղելու պահից սկսած, եթե Գաղտնիության քաղաքականության նոր խմբագրության դրույթներով այլ բան նախատեսված չէ: ԱնիմաՌենդերը Օգտագործողներին խորհուրդ է տալիս անդրադառնալ սույն Գաղտնիության քաղաքականությանը ավելի այժմեական խմբագրության հետ ծանոթանալու նպատակով: